ՀՏԴ 796

ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ա. Հարությունյան
ՆԶՊ ամբիոն

Ժամանակակից օլիմպիական խաղերի կայացումը և միջազգային օլիմպիական շարժման ծավալը 20-րդ դարի սկզբին կրում էին խորը պատճառավորված բնույթ, հետևանք էին ինչպես քաղաքակրթական, մշակութային, արժեքային, բարոյական, այնպես էլ քաղաքական, սոցիալական և գաղափարախոսական զարգացումների:

Մարդկությունը 20-րդ դար մուտք գործեց նոր աշխարհաքաղաքական իրողություններով, որոնք էին իմպերիալիզմն ու գաղութատիրությունը, աշխարհի վերաբաժանման համար սկսված կատաղի պայքարը, քաղաքակրթությունների հակասություններն ու գինված բախումները, ահագնացած սոցիալական բևեռացումն ու դասակարգային թշնամանքը, համամարդկային ճգնաժամի ընկալումներն ու անկումային, հուսահատական տրամադրությունների ածը և այդ ճգնաժամից մարդկության փրկության ուղիների գաղափարաբանական փնտրտուքը:

Այդ շարժման որոշ գաղափարները, որոնց հեղինակն է նոր ժամանակների օլիմպիական խաղերի հիմնադիր, ֆրանսիացի խոշոր հասարակական գործիչ և մանկավարժ, բարոն Պիեռ Դե Կուբերտենը, այսօր դարձել են օլիմպիական շարժման գլխավոր հիմնադրույթները և ճանապարհ են հարթում օլիմպիական շարժման հետագա զարգացման համար:

Պիեռ Դե Կուբերտենի «Օլիմպիական ուտոպիան» մեծ ֆրանսիացի մարդասերի արձագանքն էր ժամանակի դաժան, անմարդկային, ոչնչացնող մարտահրավերների, հարաճուն ռազմամոլությանը, փոխադարձ անհանդուրժողականությանը, երկրների, ժողովուրդների և մշակույթների օրավուր խորացող հակամարտությանն ու թշնամանքին:

Կարելի է ասել, որ Կուբերտենը հին օլիմպիականությունից վերցրեց ձևը, իսկ բովանդակությունը ստեղծեց յուրովի: Անփոփոխ պահպանելով հին օլիմպիական գաղափարաբանության առանցքային «ազգոնի» (մրցակցության) գաղափարը, այն ուղղորդեց գերագույն նպատակի՝ մարդու ներդաշնակ զարգացման իրագործմանը:

Կուբերտենը համոզված էր, որ մարդկության առջև ծառացած հանգուցահարցերն ի վիճակի են լուծել միայն ներքնապես ներդաշնակ, անհակասական, հանդուրժող և արժանապատիվ անհատները, որոնց հարկ է դաստիարակելը, ձևավորելը: Ինչպես գրում էր Պիեռ Դե Կուբերտենը. «օլիմպիական գաղափարները ոչ այլ ինչ են, եթե ոչ մարգումների հաճույք, մկանների կուլտուրա և գնոնցկություն, աշխատանք... այս բոլոր տարրերի անքակտելի միասնությունը»:

Նա խորապես համոզված էր, որ սպորտի միջոցով է հնարավոր մեծամասամբ իրական մարդասիրության դաստիարակումը: Հարկավոր է միայն լայնորեն տարածել օլիմպիական նոր գաղափարախոսությունը, ծավալել նոր օլիմպիական շարժում, մասսաներին տոգորել այն ընկալմամբ, որ «սպորտը մշակույթի միջոց է, մարմնի և ոգու ներդաշնակություն», որ օլիմպիական կրթությունը ազգերի միջև երկարատև խաղաղության պահպանման ամենահուսալի երաշխիքն է:

Հանրահայտ է որ, ֆիզիկական կուլտուրան և սպորտը համարվում են մատաղ սերնդի ֆիզիկական կատարելության, ուսման առաջադիմության բարձրացման, բարոյական դաստիարակության և ընդհանրապես անձի ձևավորման, համաշխարհային մանկավարժության մեծ շղթայի կարևոր օղակներից մեկը: Այդ ամենը լուրջ ու պատասխանատու խնդիր է դնում ժողովրդական կրթության բնագավառի, այդ թվում գիտական աշխատողների առջև: Ժամանակակից գիտության համակարգում հետազոտության հիմնական օբյեկտներից մեկը դառնում է մարդը: Նա ուսումնասիրում է սոցիոլոգիայի, հոգեբանության, կենսաբանության, բժշկագիտության, մանկավարժագիտության և այլ գի-

տությունների կողմից:

Մարդու ընդունակությունների զարգացման օրինաչափությունների բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունը թելադրվում է գիտության համակարգի զարգացման տրամաբանությամբ:

Դա կարևոր է նաև այն առումով, որ մարդու բազմակողմանի ուսումնասիրությունն անհրաժեշտ է հասարակական պրակտիկայում, արտադրության, կրթության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ասպարեզում առաջ եկող շատ խնդիրների լուծման համար:

Այդ առումով հատուկ նշանակություն ունի մատաղ սերնդի ճիշտ և բազմակողմանի դաստիարակությունը, որը պետք է գտնվի պետության ուշադրության կենտրոնում: Դպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է օրգանիզմի աճի ու զարգացման, գործունեության տարբեր ձևերում նրանց կողմից դրսևորվող անհրաժեշտ կողմերի՝ ընդունակությունների, հետաքրքրությունների, գբաղմունքի, օլիմպիզմի վերաբերյալ նրանց գաղափարների մասին ունենալ ստույգ տվյալներ, որի համար այդ գործընթացում պետք է սահմանել մանկավարժական վերահսկողություն և կիրառել հետազոտության ժամանակակից մասսայական մեթոդներ, հատկապես դպրոցականների օլիմպիական կրթության բնագավառում: Վերջին 15-20 տարիների ընթացքում աշխարհի շատ երկրներում դպրոցական կրթության համակարգում շարունակվում է օլիմպիական մարդասիրական միտումների ներդրավումը երեխաների դաստիարակության և օլիմպիական գաղափարախոսության գործընթացում, որը ստացել է օլիմպիական կրթություն անվանումը (В. И. Столяров, 1984, В. У. Агеевец, 1990, Н. В. Печорский, А.А. Сучилин, 1992, Л. И. Лубышева, 2000 և այլոք): Դրա համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնական ծրագրում մտցնել օլիմպիական կրթությունը, որը լայն մասշտաբներ է ընդունում Հայաստանի և Արցախի հանրապետություններում:

Նշված հարցերի լուծման նպատակով Արցախի դպրոցներում կազմակերպվել են հետազոտություններ:Հետազոտության առաջ դրված խնդրի լուծման նախադրյալներ ստեղծելու նպատակով 2002թվականին,այնուհետև 2003թվականին Արցախի բաղաքների և գյուղերի 5-10-րդ դասարանների՝ թվով 504(քաղաքների 350 և գյուղերի 154),դպրոցականների հետ օլիմպիական կրթության թեմայով հարցման և հարցաթերթիկների լրացման մեթոդով իրականացվել են հետազոտություններ:

Սկզբնական և կրկնակի հետազոտությունների արդյունքների հիման վրա ստացվել է հետազոտության մեթոդիկայի հուսալիության լրիվ պատկերը, և որպես հուսալիության հիմք ընդունվել են կրկնակի հետազոտության միջին արդյունքները / Խ. Բուբե, Վ. Պ. Ֆիլին, Վ. Մ. Զացիորսկի/:

Արցախի դպրոցականների օլիմպիական կրթության հետազոտումը
Սոցիոլոգիական հետազոտության հարցաշարերը

1.	Որ երկրում են անցկացվել առաջին օլիմպիական խաղերը	77%	78,2%	53,5%	57,1%
2.	Ինչպես է ծագել օլիմպիական անվանումը	74,9%	69,5%	51,1%	61,4%
3.	Քանի աշխարհամասեր են ընդգրկված օլիմպ. խաղերում	77,7%	75,5%	65,4%	61,4%
4.	Օլիմպիական խաղերի հինգ օղակները ինչ են խորհրդանշում	49,3%	54,3%	50%	34,2%
5.	Օլիմպիական խաղերի անցկացման պարբերականությունը	89,7%	94,5%	78,5%	91,7%
6.	Երբ և ինչ պատճառներով են ոնդհատվել հին օլիմպ. խաղերը	53,6%	48,9%	50%	30%
7.	Ժամանակակից վերջին օլիմպ. խաղերը, որ երկրում են անցկացվել	70,4%	55,4%	45,2%	40%

1.Ուսումնասիրության տվյալները վկայում են, որ օլիմպիական գաղափարների մասին Արցախի դպրոցականների գիտելիքները ընդհանրապես սահմանափակ են, առանձնապես դա վառ ձևով նկատվում է գյուղի սովորողների մոտ, ըստ էության դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ դպրոցի ֆիզկուլտուրայի և պատմության ուսուցիչները հիշյալ մարդասիրական վեհ գաղափարների մասին համապատասխան տեղեկություններ քիչ են հաղորդում աշակերտներին: Դպրոցներում բացակայում են տարբեր վիկտորինաների և օլիմպիադաների կազմակերպումը, ֆակուլտատիվ պարապմունքները՝ «օլիմպիական գիտելիքներ» թեմայով, հեռուստահաղորդումները՝ «օլիմպիական մենեջերները», միջդասարանական և միջդպրոցական մրցույթները, բացակայում են քարոզչական հաղորդումները: Այս ամենը կարող են լրացնել աշակերտների օլիմպիական կրթության և գաղափարների պաշարը, կօգնեն Արցախի դպրոցականներին լցվելու մեծ սպորտ դուրս գալու եռանդով:

2. Օլիմպիական կրթությունը Արցախի քաղաքաբնակ դպրոցականների մոտ ավելի բարձր վիճակում է, քան գյուղերում:

3. Գյուղի դպրոցականների օլիմպիական կրթության ցածր մակարդակը կապված է հեռուստատեսության բացակայության, հեռարձակման սահմանափակ ժամերի, ռադիոյի, թերթերի և հաղորդակցության մյուս ծառայությունների բացակայության հետ, գյուղական դպրոցների ուսուցիչների օլիմպիզմի մասին գաղափարների ցածր մակարդակի հետ և այլն:

4.Գյուղերում մեծամասամբ բացակայում են օլիմպիական մենեջերները, մրցումները, ֆակուլտատիվ պարապմունքները և ընդհանրապես օլիմպիական ակտիվությունը:

Ամփոփում

Ներկա հետազոտությունը նվիրված է Արցախի դպրոցների օլիմպիական կրթության հիմնախնդիրներին, որը քիչ է ուսումնասիրված: Աշխատանքում օգտագործված է սոցիոլոգիական հարցումների և մաթեմատիկական վիճակագրության մեթոդները:

Резюме

Настоящее исследование посвящено одной из малоизученных проблем в области олимпийского образования школьников Арцаха. В работе использованы методы наблюдений социологического опроса и математической статистики.

Գրականություն

1.Խաչիրյան Մ. Ս.- Հայաստանը և հայերը օլիմպիական շարժման ոլորտում. Երևան 2000
2. Օլիմպիական գաղափարներ՝ յուրաքանչյուրին հանրապետական երկրորդ հանձնաժողովի նյութեր. Երևան 2002
3. Օլիմպիական շարժման համակարգ, օլիմպիական ուսուցում ազգային դասընթացների նյութեր. Գյումրի 2003
4. «Օլիմպիական շարժման համակարգ, օլիմպիական ուսուցում». ժողովածու. գավառ 2002
5.Кун Л. Всеобщая история физической культуры и спорта. Москва. Радуга 1982
6.Штейнбах В. От Афин до Москвы. Москва, 1979.